ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ

ԱՐՏԱՔՍՎԱԾ ԵՎ ՎՏԱՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ /ԱՎԱԵՄ/ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՄԻՋԵՎ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻ, ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արտաքսված և վտարված անձանց եվրոպական միության գլխավոր քարտուղարությունը և ՀՀ Սփյուռքի նախարարության հովանու ներքո գործող «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը (այսուհետ՝ «ներքոստորագրյալներ»).

միավորված այն գիտակցությամբ, որ Եվրոպայում 20-րդ դարում. իրականացված զանգվածային հալածանքների, բռնի տեղահանման և ցեղասպանությունների պատմական հիշողությունը (որպես աշխարհամասի պատմական և բարոյական ժառանգության մաս) պետք է օրինակ ծառայի եվրոպացիների նոր սերնդի քաղաքացիական և պատմական տեղեկացվածության ձևավորման գործում,

համոզված, որ համապատասխան պայմանավորվածությունների վրա հիմնված ծրագրերի և ազգամիջյան մշակութային կապերի զարգացումը, որը ներառում է տարածաշրջանային, ազգային և եվրոպական կառույցների, ինչպես նաև հայկական սփյուռքի կազմակեպությունների և մշակութային – հետազոտական հաստատություններին, կարող է զգալիորեն նպաստել աշխարհամասի պատմական ժառանգության հարստացման գործընթացին, նույնիսկ այնպիսի սկզբունքների հաստատման և ամրապնդման միջոցով, ինչպիսին են արդարությունը, ճշմարտությունը և հիշողությունը,

ցանկանալով զարգացնել բարեկամական հարաբերությունները,

երկկողմանի ուշադրություն ցուցաբերելով մշակութային և ուսուցողական նախագծերի վերաբերյալ ծրագրերի զարգացմանը, ինչը կհանգեցնի եվրոպական մակարդակով էթնիկ զտումների և ջարդերի՝ որպես մարդկության դեմ հանցագործության, մասին տեղեկացվածության ձևավորմանը.

ՍՏՈՐԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՆՊԱՏԱԿԸ

Գիտակցելով ԱՎԱԵՄ նպատակներն ու սկզբունքները, ինչպես նաև ՀՀ ՄՆ հովանու ներքո գործող «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ուղղվածությունը, նհամազործակցել, խորացնել և մասնակցել Հայոց ցեղասպանության՝ որպես եվրոպական քաղաքացիական հասարակության ժառանգության անբաժանելի մասի, վերաբերյալ տեղեկացվածության ձևավորմանն ուղղված նախագծերում:

2. ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Համակարգման հուշագիր ստորագրել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և ԱՎԱԵՄ-ի միջև,

բ) «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և ԱՎԱԵՄ-ի միջև, ինչպես նաև Սփյուռքի կառույցների միջև կայուն հարաբերություններ հաստատելու համար հիմնել ցանց, օպերատիվ հաղորդակցություն հաստատել մշակութային – հետազոտական կազմակերպությունների հետ՝ Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվություն տարածելու նպատակով,

գ) Եվրոպական հանձնաժողովի և խոշոր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ հիմնել աշխատանքային խմբեր՝ նոր սերունդների համար կրթական ծրագրերը խթանելու նպատակով, որոնք ուղղված կլինեն պատմության, կրթության և ուսանողների շարժունակության զարգացմանը,
դ) Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական խորհրդի կառույցների հետ համատեղ նախաձեռնել համակարգված գործողություններ՝ պատմական, ավանդական, գեղարվեստական և ճարտարապետական ժառանգության տարածմանն ուղղված ծրագրեր հիմնելու համար:

3. Վերջնադրույթ

Մտադրությունների մասին հռչակագրի շրջանակներում իրագործվող յուրաքանչյուր ծրագրի իրականացման դրույթներն ու պայմանները կհամաձայնեցվեն ներքոստորագրյալների կողմից, առանձին պայմանագրերում:

Մտադրությունների մասին հռչակագրում գրավոր փոփոխություններ կարող են մտցվել ներքոստորագրյալների համատեղ որոշմամբ:

Յուրաքանչյուր ներքոստորագրյալ կարող է հրաժարվել Մտադրությունների մասին սույն հռչակագրի սահմաններում անցկացվող միջոցառումներին մասնակցությունից, որի համար պետք է գրավոր ծանուցագիր ներկայացնի մյուս ներքոստորագրյալներին վեց ամիս առաջ:

Մտադրությունների մասին հռչակագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մտադրությունների մասին հռչակագիրը կնքվում է երկու տարբերակով, որոնցից մեկը՝ անգլերեն լեզվով:

ԿՆՔՎԱԾ Է. ՀՀ Մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 26 ապրիլի, 2011թ.

.....	.....
Մասիմիլիանո Լակոտա Արտաքսված և վտարված անձանց եվրոպական միության գլխավոր քարտուղար	Գագիկ Հարությունյան «Նորավանք» Գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն